ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. Ի՞նչ է փոխվել

Doing Business in Armenia

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Վերջին երկու տարիների ընթացքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության նախաձեռնած մի շարք օրենսդրական բարեփոխումների արդյունքում.

ՊԱՐԶԵՑՎԵԼ Է *տնտեսվարող սուբյեկտների կողմից*

- հաշվետվությունների ներկայացման գործընթացը,
- ընկերությունների գրանցման և լուծարման գործընթացները,

մի շարք **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ**

- հարկային ոլորտում
- մաքսային ոլորտում
- քաղաքաշինության ոլորտում

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ *տեսչական ստուգումների համակարգում*

ՊԱՐԶԵՑՎԵԼ Է ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Այսուհետ տնտեսվարողը հնարավորություն ունի հարկային հաշվետվությունը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով ***(www.e-gov.am),***

Արդյունքում՝ *նախկին 1120 ժամվա փոխարեն, ներկայումս պահանջվում է ընդամենը տարեկան միջին հաշվով 30 ժամ հաշվետվությունը էլեկտրոնային, կամ 300 ժամ՝ թղթային եղանակով ներկայացնելու դեպքում:*

Մասնավորապես՝

- *վերացել է ԱԱՀ ամսական հաշվետվության ներկայացման պահանջն այն տնտեսվարողների համար, որոնց տարեկան շրջանառությունը փոքր է 100 մլն դրամից՝ նախկին 60 մլն դրամի փոխարեն,*
- *ոչ ռեզիդենտներին եկամուտ վճարելիս հարկային գործակալները վճարված եկամտի և պահված շահութահարկի վերաբերյալ ամփոփ հաշվարկը ներկայացնում են տարին մեկ անգամ՝ նախկին եռամսյակայինի փոխարեն,*
- *անկախ վարձու աշխատողների քանակից՝ գործատուները հարկային մարմին պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվետվությունը ներկայացնում են եռամսյակը մեկ՝ նախկին ամսականի փոխարեն,*
- *տնտեսվարող սուբյեկտները գույքահարկի և հողի հարկի հաշվետվությունները ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ՝ նախկին եռամսյակի փոխարեն:*

ՊԱՐԶԵՑՎԵԼ ԵՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

- *ընկերության հիմնադրման համար այժմ պահանջվում է 13-15 րոպե անհատ ձեռնարկատիրոջ և ՍՊԸ-ի (պետական ռեգիստրի e-register.am ինտերնետային կայքում դրված տիպային կանոնադրության ներկայացման) դեպքում, մնացած դեպքերում՝ առավելագույնը 2 օր՝ նախկին 20 օրվա փոխարեն,*
- *կազմակերպությունների պետական գրանցումն սկսել է իրականացվել անվճար՝ այլևս չի գանձվում գրանցման համար անհրաժեշտ 17000 դրամ պետական տուրքը,*
- *վերացել է տնտեսվարողների կողմից ներկայացվող փաստաթղթերի կնքված լինելու պահանջը,*
- *նախկին 157 բարդ և 12 պարզ (ընդամենը 169) ընթացակարգով տրամադրվող լիցենզիաների փոխարեն առկա են 84 բարդ և 12 պարզ (ընդամենը 96) ընթացակարգով տրամադրվող լիցենզիաների տեսակներ,*
- *ընկերության լուծարման գրանցման համար նախկին 30-ի փոխարեն պահանջվում է 20 օր:*

ՀԱՐԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ

- *այցելուների իրազեկումը մասնագիտացված կերպով ապահովելու նպատակով գործարկվել է հարկ վճարողների սպասարկման 9 կենտրոն (6-ը Երևանում, Գյումրիում, Եղեգնաձորում, Վանաձորում),*
- *ներդրվել են հարկ վճարողների հարցումներով պաշտոնական և ընթացիկ պարզաբանումների տրամադրման հստակ ընթացակարգեր, մասնավորապես սահմանվել են պարզաբանումների տրամադրման կանոնները, ժամկետները և հրապարակումը,*
- *ներդրվել է վճարումների պետական էլեկտրոնային համակարգը (e-payments.am), որը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքը կատարել էլեկտրոնային եղանակով,*
- *Երևանի քաղաքապետարանում ներդրվել է գույքի և հողի հարկերի վճարման առցանց համակարգ. առցանց վճարումը կատարվում է Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am կայքի միջոցով,*
- *վերացել է ՀՀ տարածքում արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքերի, ինչպես նաև ՀՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերի վարման պահանջը,*
- *ռեզիդենտ կազմակերպությունները շահութահարկի կանխավճարը և շահութահարկի նվազագույն վճարումն այսուհետ կատարում են եռամսյակը մեկ՝ նախկին ամսականի փոխարեն,*
- *ընկերությունները նախկին 50-ի փոխարեն տարեկան միջին հաշվով կատարում են 13 հարկային վճարում,*
- *ներդրվել է ԱԱՀ-ի հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրս գրման սկզբունքորեն նոր համակարգ, արդյունքում կրճատվում են հարկային հաշիվների դուրսգրման, հարկային մարմնից հարկային հաշիվների ձեռքբերման համար անհրաժեշտ ժամանակը և ծախսը,*
- *ներդրվել է ԱԱՀ ավտոմատ վերադարձման համակարգ:*

ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏ

- կրճատվել է մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես՝ ՀՀ մաքսատներում որպես արտաքին գործունեության մասնակից գրանցվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կազմակերպության կանոնադրությունը (պատճենը), պետական գրանցման վկայականը (պատճենը), հարկ վճարողի հաշվառման համարը (պատճենը), տեղեկանք կազմակերպության հաշվարկային հաշվի մասին՝ տրված սպասարկող բանկի կողմից), ինչպես նաև լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց կողմից մաքսային մարմին ներկայացվող գործունեության տվյալ տեսակով զբաղվելու լիցենզիայի պատճենը,
- վերացել է ՀՀ-ում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկը (ՀՀ-ում համապատասխանության գնահատումն իրականացվելու է միայն տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում),
- պարզեցվել է արտահանվող երկակի նշանակության ապրանքների համապատասխան փորձագիտական տեղեկանք տալու ընթացակարգը. կրճատվել է փորձաքննություն իրականացնելու ժամկետը՝ 1 ամսից դառնալով առավելագույնը 10 օր,
- ինչպես նաև փորձաքննության վճարը՝ 180.000 դրամից դառնալով 60.000 դրամ,

կրճատվել են տնտեսվարող սուբյեկտների կողմից հավաստագրման գործընթացի համար ծախսվող ժամանակը և ծախսը, մասնավորապես, սերիական արտադրության ապրանքների համար պարբերաբար ծագման երկրի հավաստագիր կտրամադրվի միայն առաջին անգամ փորձաքննություն իրականացնելով:

ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

- Եթե ստուգում իրականացնող մարմինը չի ներդրել ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ, ապա չի կարող ստուգումներ իրականացնել փոքր և միջին ձեռնարկություններում (այն տնտեսվարող սուբյեկտների մուտ, որոնց նախորդ տարվա շրջանառությունը չի գերազանցում 70 մլն ՀՀ դրամը),
- մինչև 2012 թ. ավարտը ստուգում իրականացնող մարմինների մեծամասնությունում ներդրվելու է ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգ, որը հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտին նախապես ծանոթանալ ստուգում իրականացնող մարմնի ռիսկայնության գնահատման մեթոդաբանությանը և կանխատեսել իր մուտ իրականացվելիք ստուգումների հաճախականությունը,
- ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգով ստուգում իրականացնող մարմինները ստուգումն իրականացնում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հրապարակվում են պաշտոնական տեղեկագրերում և ներառում են ստուգման ենթակա հարցերի ամբողջական ցանկը՝ ստուգման գործընթացը դարձնելով թափանցիկ,
- բոլոր ստուգում իրականացնող մարմիններն իրենց պաշտոնական կայք էջում հրապարակում են իրենց տարեկան ստուգումների ծրագրերը մինչև ստուգմանն նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը, որտեղ հստակ նշվում են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք ստուգվելու են հաշվետու տարվա ընթացքում: Ստուգումների տարեկան ծրագիրն ամփոփ տեսքով կարելի է գտնել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջի տեսչական բարեփոխումներ բաժնում (www.mineconomy.am):

«ՃԿՈՒՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2013»

վարկանիշային զեկույց

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 23-ին հրապարակված՝ «Ճկուն կարգավորումներ ՓՄՁ-ների համար 2013» վարկանիշային զեկույցի տվյալներով, որը կազմվում է գործարարների և պետական մարմինների կողմից լրացրած հարցաթերթիկների ամփոփման հիման վրա՝ նախորդ տարվա համեմատ Հայաստանը բարելավել է իր դիրքը 18 կետով՝ 185 երկրների շարքում գրավելով 32-րդ դիրքը (լավագույն 20 %- ի շարքում է)՝ զիջելով Նիդերլանդներին և առաջ անցնելով Բելգիայից:

Այս տարվա արդյունքներն աննախադեպ են՝ վերջին երկու տարիների (2012 և 2013թթ) զեկույցների տվյալներով Հայաստանն իր դիրքը բարելավել է 29 կետով:

«Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցում Հայաստանն ամենամեծ առաջընթացն արձանագրել է հետևյալ ցուցիչներով՝

- «Ներդրողների պաշտպանվածություն» - դիրքը բարելավվել է 73 կետով, 98-րդ տեղից բարձրանալով 25-րդ տեղը,
- «Հարկերի վճարում» - դիրքը բարելավվել է 44 կետով՝ 152-ից բարձրանալով 108-րդ տեղը,
- «Էլեկտրականության միացում» - դիրքը բարելավվել է 42 կետով՝ 143-ից բարձրանալով 101-րդ տեղը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն
Տպագրվել է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը Տպաքանակը՝ 8.000 օրինակ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

- մինչև 1500 քառ. մետր մակերեսով օբյեկտ կառուցելու թույլտվություն ստանալու համար պահանջվում է ընդամենը 7 քայլ և 27 օր՝ նախկին 20 քայլ և 137 օրվա փոխարեն,
- նախկինում չափագրված գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը կատարվում է առանց չափագրման աշխատանք կատարելու և դրա դիմաց վճար գանձելու,
- օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմանները (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) տրվում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ միասին՝ ՏԻՄ-երի կողմից: Ստացվում է, որ կոմունալ ծառայություններ մատուցող ընկերություններ այցելելու անհրաժեշտությունը բացակայում է,
- կախված * կառուցվող օբյեկտի բարդության աստիճանից ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի տրամադրման ժամկետներն են՝

I ԿԱՏԵԳՈՐԻԱ	Առաջադրանք չի պահանջվում
II ԿԱՏԵԳՈՐԻԱ	10-օրյա ժամկետում
III ԿԱՏԵԳՈՐԻԱ	15-օրյա ժամկետում
IV ԿԱՏԵԳՈՐԻԱ	20-օրյա ժամկետում
V ԿԱՏԵԳՈՐԻԱ	20-օրյա ժամկետում

- ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու դրա անբաժանելի մասը կազմող տեխնիկական պայմանները տրամադրվում են անվճար:

**** կառուցվող օբյեկտի ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման ժամկետների վերաբերյալ հավելյալ տեղեկատվության համար այցելեք arlis.am կայք***

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- հստակեցվել են էլեկտրականության միացման գործընթացները, կրճատվել են սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետը և ծախսը,
- ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևեր, որոնց համապատասխանող պայմանագրերից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կարող է իրականացվել նաև առանց պայմանագրի նոտարական վավերացման,
- շահագրգռվածության առկայությամբ իրականացված գործարքների (տնտեսական գործունեության) բացահայտման մեխանիզմները կատարելագործվել են և տնօրենների պատասխանատվությունն ընդլայնվել է, մասնավորապես՝ ընկերության ցանկացած գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելու է տարեկան հաշվետվության մեջ, իսկ գործարքում շահագրգիռ ճանաչված անձի կողմից օրենքի խախտմամբ ընկերությանը հասցված վնասը և նախատեսվող շահույթը վերադարձվելու է:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐՆ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Երկիր	2012	2013	փոփոխություն
ՀԱՅԱՍՏԱՆ	50	32	+18
Ղազախստան	56	49	+7
Բելառուս	60	58	+2
Ղրղզստան	69	70	-1
Մոլդովա	86	83	+3
Ռուսաստանի Դաշնություն	118	112	+6
Ուկրաինա	152	137	+15
Տաջիկստան	147	141	+6
Ուզբեկստան	168	154	+14

ՀԱՅԱՍՏԱՆԸ 2-ՐԴՆ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Երկիր	2012	2013	փոփոխություն
Վրաստան	12	9	+3
ՀԱՅԱՍՏԱՆ	50	32	+18
Ադրբեջան	66	67	-1
Թուրքիա	68	71	-3
Իրանի Իսլամական Հանրապետություն	144	145	-1